

**Բարձրագույն կրթական
հնարավորությունները բուհերի
ուսանողների, աշխատակազմի և
անհատների համար
Էրազմուս+ ծրագրի ներքո**



Erasmus+

**Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակ
Հասցե՝ Սարմենի 82 փ., Երևան 0019
Հեռ.՝ (+374 10) 580963**

**Էլ. հասցե՝ info@erasmusplus.am, program@erasmusplus.am
www.erasmusplus.am**

Հետևեք մեր նորություններին ֆեյսբուքում



<https://www.facebook.com/neoarm>

Էրազմուս+ ծրագիրը (2014-2020 թթ.)

Էրազմուս+-ը ԵՄ նոր ծրագիր է կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի հարցերով, որը կընթանա 2014-2020 թթ. ժամանակահատվածում: Այն փոխարինում և համախմբում է նախկին յոթ ծրագրերը, այդ թվում՝ Տեմպուսն ու Էրազմուս Մունդուսը:

Իր նպատակներին հասնելու համար Էրազմուս+ ծրագիրը իրականացնում է հետևյալ 3 հիմնական գործողությունները և այլ միջոցառումները՝

- ✦ **Անհատների ուսումնական շարժունություն (Գ1)**՝ համատեղ մագիստրոսական ծրագրեր, կրեդիտային շարժունություն (նախկին Էրազմուս Մունդուս ծրագրի Գործողություն 1, 2)
- ✦ **Նորարարությանը միտված համագործակցություն և լավագույն փորձի փոխանակում (Գ2)**՝ կենտրոնանալով բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման վրա (նախկին Տեմպուս ծրագիր)
- ✦ **Աջակցություն քաղաքական բարեփոխումներին (Գ3)**
- ✦ **Ժան Մոնեի գործողություններ**՝ Եվրոպական ինտեգրման ուսումնասիրություններ

Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի մանդատը ներառում է ծրագրի **միջազգային բարձրագույն կրթության հատվածին** առնչվող բոլոր աջակցող, խթանող, մոնիտորինգի և տեղեկատվության տարածմանը միտված գործողությունները:

Ծրագրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել այցելելով՝

<http://erasmusplus.am>

http://ec.europa.eu/programmes/erasmus-plus/index_en.htm

http://eacea.ec.europa.eu/erasmus-plus_en

Ֆինանսավորման հնարավորություններ

Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրերը լավագույն ուսանողներին ամբողջական կրթաթոշակով ԵՄ համալսարաններում ուսանելու հնարավորություն են ընձեռում: Ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է գտնել <http://erasmusplus.am> վեբկայքի «Հիմնական Գործողություն 1» էջում: **Դիմումները սովորաբար ընդունվում են յուրաքանչյուր տարվա հոկտեմբերից հունվար ընկած ժամանակահատվածում:**

Կրեդիտային շարժունությունը հնարավորություն է ընձեռում հայաստանյան ուսանողներին, ինչպես նաև համալսարանների աշխատակազմին ուսանելու և/կամ մասնագիտական փորձ ձեռք բերելու եվրոպական երկրներում: Ֆինանսավորվում են **ուսանողների փոխանակումները 3-ից մինչև 12 ամսով**, և **բուհերի աշխատակազմի փոխանակումները 5 օրից մինչև 2 ամսով**: Դիմորդներին կտրամադրվի կրթաթոշակ, որը կհոգա ճանապարհորդության, վիզայի, ապահովագրության, ինչպես նաև կեցության ծախսերը: **Դիմումների և լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք ձեր համալսարանի միջազգային հարաբերություններով զբաղվող բաժնի հետ:**

Ժան Մոնե Գործողություններն աջակցում են դասավանդմանն ու հետազոտությանը, համագործակցության ծրագրերին, համաժողովների անցկացմանը և հրատարակություններին ԵՄ ուսումնասիրությունների ոլորտում: Հայաստանի բուհերը, կազմակերպություններն ու ասոցիացիաները կարող են դիմել Գործողություններին ֆինանսավորման համար:

<http://erasmusplus.am/erasmus/jean-monnet/>

Աջակցություն համալսարաններին

2008թ.-ին Եվրոպական հանձնաժողովը հանդես եկավ նախաձեռնությամբ, որն ուղղված էր յուրաքանչյուր Գործընկեր երկրում բարձրագույն կրթության ոլորտի փորձագետների փոքր խմբերի կազմակերպմանը:

Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների (ԲԿԲՓ) ազգային խմբերի խնդիրը Լիսաբոնի և Բուլոնիայի նպատակների իրականացման առաջընթացն ապահովելու հարցում որոշակի բնագավառներում ազգային կարիքներին և ձգտումներին համապատասխան փորձառության փոխանցումն է:

Հայաստանի ԲԿԲՓ-ի խումբը ներգրավված է իրազեկման բարձրացմանն ուղղված տարբեր միջոցառումներում և բուիերին խորհրդատվություն է տրամադրում հետևյալ բնագավառներում՝

- ✦ Որակի ապահովում (ներքին, արտաքին),
- ✦ Եռաստիճան համակարգ. Կրթական ծրագրերի բարեփոխումներ, որակավորումների ազգային և եվրոպական շրջանակներ, Թյունինգ
- ✦ Փոխճանաչում (Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ, Դիպլոմի հավելված, Europass, Լիսաբոնի փոխճանաչման կոնվենցիա) և այլն:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության և Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի համատեղ համաձայնությամբ 2015 թ. փետրվարին տասը անձինք ընտրվել են որպես Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխման փորձագետներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել <http://erasmusplus.am> վեբկայքի «Կրթության փորձագետներ» էջը:

